29 նոյեմբերի 2018 թ. <<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ
Ժամը 12:00 թիվ՝ 3 ք. Երևան Ֆանարջյան փ. 76 շ.

Արձանագրություն

ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/62 ծածկագրով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

գնահատող հանձնաժողովի նախագահ
/գլխ հաշվապահ/ Շ Անանյան
հանձնաժողովի անդամներ
/հաշվապահ/ Ն Դավթյան
/հաշվապահ/ Ա Գևորգյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Հարություն Օհանյան

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված

Հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

Հանձնաժողովի նախագահ Շ Անանյան

1. Ընդունել ի գիտություն որ՝

1.1 Գնահատող հանձնաժողովի քարտուղար Հ. Օհանյանը համաձայն՝ ՀՀ կառավարության 14 մայիսի 2017 թվականի թիվ 534-Ն որոշման 1-ին կետով հաստատված «էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգ»-ի /այսուհետ՝ Կարգ/ 19-րդ կետի և գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.10-րդ կետի պահանջներին կատարել է հարցում՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /այսուհետ՝ Կոմիտե/, առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Կոմիտեն կատարված հարցման վերաբերյալ տրամադրել է եզրակացություն: Եզրակացության համաձայն ԱՎԱ-ԼԻԱ ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա՝ 08-11-2018թ.-ի, դրությամբ ունեն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ: ԱՎԱ-ԼԻԱ ՍՊԸ-ի պարտքը կազմում էր 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:

ԱՎԱ-ԼԻԱ ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունները գերազանցում էին <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված շեմը՝ 2-րդ, 4-24-րդ, 26-րդ և 27-րդ չափաբաժինների համար ներկայացրած գնային առաջարկների մեկ տոկոսը:

2. Առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցների մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների համապատասխանության գնահատման մասին

4.1 Հիմք ընդունելով Կարգի 20-րդ և գնման ընթացակագրի հրավերի 2.5-րդ և 7.11-րդ կետերեի դրույթները և հրավերով սահմանված որակավորման պահանջների առկայությունը հիմնավորելու նպատակով Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի վերաբերյալ հանձնաժողովի անդամների տրված գնահատման թերթիկները (կցվում են), գնահատող հանձնաժողովը որոշեց

- Սմարթլայն ՍՊԸ-իասնակցության իրավունքի և որակավորման պահանջները գնահատել բավարար
- ԱՎԱ-ԼԻԱ ՍՊԸ-ի 1-ին, 2-րդ, 4-24-րդ, 26-րդ և 27-րդ չափաբաժինների մասով գնահատել անբավարար
- Դավիթ Քոչարյան ԱՁ-ի մասնակցության իրավունքի և որակավորման պահանջները գնահատել բավարար

Ընդունել որոշում կողմ **3** ***(երեք),*** դեմ ***0 (զրո)*** ձայներով

2. Մերժված հայտերի, չկայացած չափաբաժինների և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասին

2.1 Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և գնման ընթացակարգի հրավերի 7.11-րդ կետի դրույթներով նաև հաշվի առնելով, որ գնման ընթացակարգի հրավերի 7.15-րդ կետի համաձայն առաջին տեղը զբաղեցրած և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների որոշեց՝ 1-ին, 2-րդ, 4-24-րդ, 26-րդ և 27-րդ չափաբաժինների մասով մերժել ԱՎԱ-ԼԻԱ ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, քանի որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ԱՎԱ-ԼԻԱ ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունները գերազանցում էին 1-ին, 2-րդ, 4-24-րդ, 26-րդ և 27-րդ չափաբաժինների համար ներկայացրած գնային առաջարկների մեկ տոկոսը:

Հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 20-րդ և 21-րդ կետերի դրույթներով որոշեց՝ հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել, ծանուցել ԱՎԱ-ԼԻԱ ՍՊԸ-ին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում, ինքնուրույն կամ Կոմիտեի միջոցով ներկայացնել Կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությունից տարբերվող այլ լրացուցիչ տեղեկատվություն, որում կհերքվի ԱՎԱ-ԼԻԱ ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ ունենալու հանգամանը:

2.2 Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով որոշեց՝ գնման ընթացակարգը 23-րդ, 24-րդ և 26-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած, քանի որ 23-րդ, 24-րդ և 26-րդ չափաբաժինների համար մասնակցության հայտ ներկայացրել էր միայն ԱՎԱ-ԼԻԱ ՍՊԸ-ն, ում հայտը սույն արձանագրության 2.1 կետի համաձայն մերժվել է:

2.3 Քանի որ 14-րդ չափաբաժնի մասով ԱՎԱ-ԼԻԱ ՍՊԸ-ից հետո հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Սմարթլայն ՍՊԸ-ն գահատող հանձնաժողովը որոշեց՝ հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել՝

ծանուցել Սմարթլայն ՍՊԸ մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել 14-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերը::

Ընդունել որոշում կողմ **3** ***(երեք),*** դեմ ***0 (զրո)*** ձայներով

3 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին

6.1 Գնահատման արդյունքների հրապարակման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել Կարգի 22-րդ կետով սահմանված ժամկետներում:

Ընդունել որոշում կողմ ***3 (երեք)***, դեմ ***0 (զրո)*** ձայներով

գնահատող հանձնաժողովի նախագահ
/գլխ հաշվապահ/ Շ. Անանյան
հանձնաժողովի անդամներ
/հաշվապահ/ Ն. Դավթյան

/հաշվապահ/ Ա. Գևորգյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Հարություն Օհանյան